Թող Աստուած Ձեզ պարգևէ կենաց երկար ու խաղաղ տարիներ, լուսաշող ու պտղառատ գործունէութեան տարիներ, ի փառս Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, և յանասանութիւն անկիկական մեծ եկեղեցւոյ:

«Այսուհետև զօրացարուք Տերամբ և կարողութեամբ զօրութեան նորա» (Եփես. Զ 10). ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 24-ը յունուարի
1975 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԴ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 793

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի փետրվարի 19-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, լոնդոնահայ համայնքային և եկեղեցական խորհուրդի անունով գեր. տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը՝ հայրապետական պատվիրակ և հոգեվոր տեսուչ Անգլիայի հայոց, տիար Հայկ Ապաճյան՝ պատվակալ ատենապետ համայնքային և եկեղեցական խորհուրդի, և տիար Բարսեղ Կյուլպենկյան՝ Խորհուրդի վարչական մարմնի պատվակալ ատենապետ, համաձայն նախօրոք առնված ժամադրության, հյուրընկալվեցան Անգլիո առաջնորդ և Քենտրբերիի արքեպիսկոպոս գեր. տ. Դոնալդ Ֆրեդերիկ Գոկանի կողմե Լամբեթի պալատին մեջ:

Համայնքային և եկեղեցական խորհուրդի ներկայացուցիչները այս առթիվ թարգմանը հանդիսացան Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի եղբայրական ողջույններուն և ապա անգլիահայ գաղութի շնորհավորանքները և որդիական հարգանաց հավաստին ներկայացուցին անգլիկան եկեղեցվո նորընտիր գահակալին:

Իր հերթին Քենտրբերիի արքեպիսկոպոսը մասնավոր հետաքրքրություն ցույց տվեց հայ գաղութի կրոնական, ազգային և մշակութային կյանքի նկատմամբ: Ջերմ փափագ հայտնեց Հայոց Հայրապետին անձամբ ողջունելու՝ ապագայի առաջին հնարավոր այցելության առթիվ: Նաև, ընդառաջելով իրեն տրված հարցին, պատասխանեց՝ ըսելով, որ շատ կփափագի քրիստոնեության վաղեմի օրրան Հայաստան այցելել՝ ողջունելու Հայոց Հայրապետը և ս. գրական Արարատ սարն իր սեփական աչքերով տեսնելու:

Այս առթիվ անգլիահայ գաղութի կողմե պատրաստված հուշանվերներ հանձնվեցան անգլիկան եկեղեցվո նորընտիր գահակալին, և ջերմ տպավորություններով ու մաղթանքներով տեսակցությունը իր ավարտին հասավ:

ԼՈՆԴՈՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լոնդոն,
23-ը փետրվարի 1975 թ.